ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 431

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Զեղեա բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Վայք համայնքի (Զեղեա բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Զեղեա բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (Զեղեա բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
10-023-0306-0187 կադաստրային ծածկագրով 6.90481 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	10-023-0306-0187 կադաստրային ծածկագրով 6.90481 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ ներքին գործերի նախարարությունների կողմից ներկայացված պայմանները (կցվում են):

4. Վայք համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Զեղեա բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (Զեղեա բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, «26» «դեկտեմբերի» 2025 թ.